# ԲՆԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՈՒՄ»

Մ. Գ. ՁԱՔԱՐՅԱՆ

Ավ. Իսահակյանի բնապաշտությունը առկա է գրողի առաջին իսկ ստեղծագործություններում։ Բնությունը նրա համար ինքնադրսևորման, ինքնաբացահայտման միջոց է, և նա իր հոգևոր նրբին ապրումներն ու ալեկոծությունները առարկայացնում է բնության երևույթների միջոցով։ Բնությունը մի դեպքում ներդաշնակ է պատանի բանաստեղծի ներքին ելևէջներին («Ցաված սիրտս երդեր հյուսեց»[1]), այլ դեպքում՝ անտարբեր («Տոթը այրեց վարդրն անուշ», I, 4)։ Ուշագրավ է, որ Իսահակյանի օրագրի՝ «Հիշատակարանի» առաջին գրառումը նույնպես սկսվում է բնապաշտական հակումների շուրջ խորհրդածություններով։

Ի տարբերություն չափածոյի և արձակի, օրագրում գրողի բնապաշտությունը ներկայանում է առավել խոր և բազմաշերտ կտրվածքներով, մեկնություն-կոտորակումներով։ Այսպես, եթե բանաստեղծություններում քնարական հերոսն ինքն է վերածվում բնության («Կուզե՞ս լինիմ վշտի ցողեր», «Կուզեի լինել գարնան արեգակ»), ապա օրագրում արդեն ողջ խորքով ներկայանում է «մարդը բնության հյուլեն է» մտայնությունը՝ Խ. Աբովյանից Գյոթե ձգվող ուռեծոով՝ ակունքներում առնչվելով եվրոպական լուսավորիչ մտածողներին։ Որպես կենսաբանական և հասարակական երևույթ, մարդը եզակի է ու բարդիկ, միակը տիեզերքում հաղորդակցվելու կարողությամբ, մտքի երևակայական սլացքով, արարելու, ստեղծելու, շենացնելու ունակությամբ. «Մարդը զգացող և մտածող բնությունն է։ Մասն ու մասնիկը մեծ բնության, բայց մտածող ու զգացող»[2]։

Մարդուն տիեզերքի իմաստն ու նպատակը համարելով՝ Իսահակյանը հավաստում է. «Տիեզերքը անսահման մեծ է... ես եմ նրա իմաստը։ Առանց մարդու ի՞նչ արժեք ունի տիեզերքը...» (Հ, 310)։ Մարդ արարածի պատկերման չափանիշները ստեղծագործություններում արդեն ներկայանում են տիեզերքի զուգորդումներով, երկինք-երկիր ձգվող աղերսներով.

> Տիեզերքի պերճ հյուսվածքն եմ,
> Իմ մեջ երկինքն է երդում.
> Բոնկում է սիրտ հրդեհն,
> Վշտի հեղեղն աղմկում... (I, 34)։

Մարդ էակի այսպիսի բնութագրումներ յուրովի խաչաձևում են և՛ շեքսպիրյան օրհներգություն-փառաբանությունները («Ի՞նչ հրաշակերտ է մարդը։ Որչա՞փ ազնիվ են նրա դատողությունները։ Որչա՞փ անսահման են նրա ընդունակությունները...»)[3] և՛ թումանյանական իղեալ-երազանքները

---

1 Ավ. Իսահակյան. Երկերի ժողովածու վեց հատորով. Երևան, 1973—1979, հ. 1, էջ 3։ Այսուհետև այս հրատարակությունից արված մեջբերումների հատորն ու էջը կտրվեն տեքստում. Ավ. Իսահակյան. Հիշատակարան (Երևան, 1977), դիրքը կնշվի 2 տառով։

2 Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի Թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Իսահակյանի արխիվ, 403—404—II, էջ 48։

3 Վ. Շեքսպիր. Ընտիր երկեր երեք հատորով. հ. I, Երևան, 1951, էջ 50։

(«Մարդու էն վեհ ու վսեմ, էն մաքուր ու անաղարտ պատկերը, որ տվել է նրան աստված, կազմված ու հյուսված բնության ամենամաքուր տարրերից»)[4]։ Այսօրինակ աղերսներով հանդերձ՝ Իսահակյանը «Հիշատակարանում» երբեմն էլ ուրույն եղրակացության է հանդում՝ մարդն առավել մեծ է տիեզերքից, քանի որ վերջինս սոսկ հյուլ է նրա բանականության և զգացմունքային աշխարհի անհունի համեմատությամբ. «Տիեզերքը անսահման մեծ է... նրանից մեծ եմ և վեհ, ես զգում եմ և ինձ, և նրան...» (Հ, 310)։ Գրողի ասելիքն այստեղ վերացական է՝ «զգում եմ», մինչդեռ օրագրի թեկուզ մասնակի ծանոթությունն ինքնին վեր է հանում նրա զգայական աշխարհի երկու սայրը՝ սերը և տառապանքը, որով տրոփում է ողջ «Հիշատակարանը»։ Դա հրդեհվող սեր է, ոչ միայն սիրած էակի կամ մոր, այլ ընդհանրապես մարդ արարածի, ցավ ու տառապանք նրա ճակատագրի և արյունոտ իր հայրենիքի հանդեպ։ Ինչպես է. Տոլստոյը, Իսահակյանը նույնպես համոզված էր, որ միայն տառապանքից է մարդը վերածնվում, վիշտն ու տվայտանքը հոգեպես մաքրում են մարդուն, ցավակից դարձնում նրան իր նմանների դառնություններին, վեր պահում մանրախնդրությունից։ Այս դեպքում Իսահակյանի այս խորհրդածությունները օրագրում հանգում են արդեն տիեզերքի դուդայրությամբ մարդու վիշտը տիեզերքից մեծ է մտայնությանը.

...Ոչինչ է մարդը՝ փոշի փոշու մեջ
Իր ցավը, սակայն, տիեզերքից մեծ (I, 374)։

Ինչպես չափածոյում ու արձակում, այնպես էլ «Հիշատակարանում» Իսահակյանի բնապաշտությունը, բանաստեղծական լինելուց բացի, նաև խոր փիլիսոփայություն է իր մեջ պարունակում։ Դեռևս տասնիններորդ պատանի, հեղինակը հավաստիացնում էր, որ մարդը՝ բնության այդ բանական զավակը, «...պիտի ապրի բնությանը անմիջապես մոտ-սերտ կապված. նա պիտի խույս տա արհեստականից...» (Հ, 74)։ Ասել կուզի՝ հեղինակը բնության հետ սեյդաշնակ կյանքով է պայմանավորում մարդկության հարատևումը, և ըստ այդմ էլ նրա ներքին ներդաշնակությունն ու կարգուկանոնի հավիտենական օրենքները ուղենիշ է համարում մարդ արարածի համար։ Բնության մեջ ամեն ինչ մեռնում է՝ նորից ծնվելու և ապրելու համար՝ իր զարգացման ու կատարյալության մեջ ենթարկվելով անփոփոխ ու բարձրակարգ օրենքների։ Սզակի անհատներին էլ մեծ մայր բնությունը պարգևում է ստեղծագործական սլացք, արարման վայելքի աստեղային պահեր։ Հավերժ փոփոխվող բնության մեջ էլ մարդ էակը, կյանքի իրեն տրված կարճատև ժամանակահատվածում, արարում է ժամանակից վեր մտքի ու զգացմունքի արժեքներ՝ գիտության և արվեստի բազմաթիվ ստեղծագործություններ։ «Հիշատակարանում» Իսահակյանը մարդ էակին զննում ու ներկայացնում է հակադրությունների միաձույլ ներդաշնակությամբ այնպես, ինչպես մեծ բնությունն ինքն է, սակայն Գյոթեի նման նա նույնպես մարդու կոչումը կյանքում առնչում է նրա ակտիվ ճանաչողությանը, ոգևորությանն ու արարմանը։ Իսահակյանը զգաստ ու սթափ հայացքով է զնահատում և արժեքավորում մարդ-բնություն հարաբերությունները, որոնք այստեղ արդեն շատ են հեռու նրա պատանեկան, դեռևս չձևավորված պատկերացումներից. «Կյանքը կռիվ է, այո, կռիվ է, սարսափելի կռիվ, բայց ոչ միմյանց հետ (մարդերի), այլ բնության հետ» (Հ, 23)։ Այնուամենայնիվ, նման հարցում գրողը միշտ ներկայանում էր կասկածի երանդով՝ «Արդյոք սխալ չե՞մ մտածում...» (Հ, 23)։ «Հիշատակարանում» բնություն-մարդ փոխհարաբերությունները ներկայացնող հատվածներում հեղինակը հոգեպես ձուլվում է բնությանը՝ ժամանակավորապես մոռանալու համար մանր հոգսերով լի առօրյան։ Նա հոգևոր խոյանք է ապրում բնության վեհության ու անեզրության մեջ։ Բարի, մայր բնության գրգ-

4 Հովհ. Թումանյան. Երկերի ժողովածու 6 հատորով. հ. 4, Երևան, 1951, էջ 240։

վանքի ու վայելքի պահերին, հատկապես ստեղծագործական ներշնչանքի խորին գաղտնիքներին հասու լինելու ձգտումների մասին նրա խորհրդածությունները հիշեցնում են Շելլիի պոեզիան։ Ինչպես նրա, այնպես էլ հայ գրողի մոտ բնության հանդեպ տածած վեհ զգացմունքները աննկատելիորեն իրենց մեջ են ներառնում և մարդկության մասին խոհերը. չէ՞ որ մարդն է զավակը այդ բարի բնության։

Բնության հրաշք գեղեցկություններից Իսահակյանի ուշադրությունը «Հիշատակարանում» հատկապես գրավում են անընդգրկելի, վեհ, իրենցում խորին խորհուրդներ ունեցող երևույթները, այդ թվում ծովը և արևը։ Սեփական բազմախորք հոգեկան ապրումները օրագրի հեղինակը հաճախ է համեմատում ծովի հետ. «Ծովը եռում էր—սիրտս եռում էր։ ...ծովը պարում էր—ծովը սրտումս էր շաչում, փրփրում, պարում, լալիս...» (Հ, 232)։ Ծովը ներքին անդորր ու երանավետ հանգստի պահեր է պարգևում, անհատակ խորությամբ ու ջինջ կապույտով հոգեպես վեհացնում նրան։ Իր անսահմանությամբ և անընդգրկելիությամբ ծովը հանդուգն ու վեհ մտքեր է ներշնչում միաժամանակ։ Ընդվզման պահերին մարդը դեպի երկինք կարկառած ձեռքերով, իսկ ծովը ահեղամռունչ ալիքներով են ծառս լինում դեպի երկինք։ Թվում է՝ աքսորավայրը Օդեսան ընտրելու հանգամանքը ևս պայմանավորված է ծովի հանդեպ գրողի տածած հիացմունքով։

«Հիշատակարանում» ծովը, ջուրը նաև հոգևոր ինքնամաքրման խորհրդանիշ է, որը միաժամանակ գեղեցկություններ է խորհրդանշում, թաքցնում մարդկային երազանքներ։ Հեթանոս հայի համար երկնքին ձուլված ծովը նաև մեռած մարդկանց հոգիների հետ հաղորդակցման վայր էր, և հատկանշական է, որ գրողի օրագրում նմանօրինակ բնանկարով էլ է ծովը պատկերված. «Նայում ես ծովին, և հորիզոն չկա. միացած է ծովը երկնքի հետ, չկա անջատման գիծ, նայում ես և սուզվում անհունության մեջ։ Օրագրում ծովը գրողի մտահղացումներում երբեմն իր մեջ է ներառնում նաև քաղաքական երանգներ, ուր ազատ ու անկախ Հայաստանի ստեղծման նվիրական գաղափարը հեղինակը այլաբանորեն առնչում է լողալ-կռվելուն՝ հասնելու համար հեռավոր, բայց և ցանկալի ափը.

...ես շատ կուզեմ ծովն ընկնել,
Լողալ, կռվել, ալիքները
Ճղել։—Ա՜խ, ինչ ցանկալի է
Հեռավոր ափը... (Հ, 235)։

«Հիշատակարանում» առկա են նաև արևի պաշտամունքի հետքեր։ 1934 թ. սեպտեմբերի 20-ին կատարված նշումներում արևը դիտվում է որպես ուժի, հզորության, գեղեցկության խորհրդանիշ, իսկ հին կրակապաշտ հայի բազմաստվածության հետքերը առավել շոշափելի են գրողի հետևյալ խորհրդածություններում. «Խորհրդավոր է ծովը՝ անպարփակելի, անպարտելի։ Արևը նրա միջից է ելնում և նրա մեջ է սուզվում... Ահավոր աստված է նա» (V, 158)։ Եվ ահա բնության այդ վեհ ու հզոր երևույթի հետ էլ գրողը օրագրում համեմատում է իրեն. «...ուզում եմ ես միայն բարձր արև լինել... ես՝ հերոս, արև» (Հ, 170)։ Այստեղ գրողի մոտ դրսևորվում է հեթանոս հայի մտայնությունը։ Եթե մայր մտնող արևը անդորրի է գնում, ապա ծագող արևը գրողին ներկայանում է չքնաղ կույսի տեսքով. «...ոսկի լեռների հետևից ելած նազելի արևը, թարմ, պայծառ արևը՝ նման չքնաղ, հեզաշուք կույսի... և առաջին ճաճանչները... համբույրի պես... գգվեցին ճակատս ու աչքերս և ինձ էլ ոսկու մեջ թաղեցին...» (Հ, 280)։ Սա արդեն հայոց հին հավատալիքներում արևի դուստրն է՝ Այգը կամ Արշալույսը, որ հագնում է իր ծիրանագույն զգեստները, ոսկե կառքով բարձրանում լեռնակատարները և երկրի դարպասները բաց անում իր հոր՝ արեգակի առաջ, որից հետո ճաճանչներով դուրս է ելնում արևը և երկիրը լցնում կենարար ջերմությամբ։ Սա, ըստ էության, արևի մահվան և հարության առասպելն է՝ ուրույն ձևով

վերարտադրված։ Հեղինակի գրառումներից մեկում էլ արևը արդեն հասարվում է բնության եզակի ու բացառիկ երևույթ՝ անզուգորդելի սրբություն։

1902 թ. կատարված գրառման մեջ «Անի» բառի մեկնությամբ («Անի-սանսկրիտ մայր լեզվից է բխել և կրակ, հուր կնշանակե...») Իսահակյանը ադդային գրականության մեջ արևի՝ անշեջ հրի քիչ ուշադրության արժանացած ուրույն և ինքնատիպ ստայնությունն է ներմուծում՝ ազատության սեր. «Անի... թող նա, պանծալի Անին, լինի անշեջ հուր հայության սրտում վառելու և բորբոքելու ազատության սերը, և լինի սեր վերածնության ֆենիքսը» (2, 253)։ Արևի, անշեջ հրի՝ որպես ազատության սիրո մեկնությունը, թվում է, դուստ ադդային հոգեբանությամբ է պայմանավորված։

1895 թ. հունվարի 19-ին կատարած գրառման մեջ օրագրի հեղինակը բնությունն է օժտում սոցիալական երանգավորմամբ՝ բարձր, վեհ գաղափարներ ասնշելով նրա վսեմ երևույթներին՝ «Նեղ ու խոնավ տների մեջ իդեալ չի կարող ծնվել... Ինձ ավելք լեռներ ու ձորեր, սարեր ու դաշտեր, ծովեր ու անտառներ, ես ձեզ իդեալներ կտամ» (2, 159)։

Մեծ բնապաշտը դեմ էր նաև բնության շահագործմանը, և դա հատկապես ի հայտ եկավ Սևանա լճի ջրի օգտագործման հարցում նրա անհաշտ, աննահանջ ու ըմբոստ դիրքորոշումներում։ Մեծ մարդասերի համար գիտության հեռահար նպատակը մարդ էակի բարօրությունն էր, հոգևոր-մարդկային նկարագրի ազնվացումը, նրան վեհ, անաղարտ, անմահ ու հավերժական, ասել է՝ նրան Աստված տեսնելու երազանքն էր. «Բնության մեկնության մեջ մարդ հասնում է աստվածության... Բնությունից եզրակացում ես Աստծո գոյությունը»[5]։

Սառանալով ժամանակի սոցիալ-քաղաքական աններդաշնակության դեմ՝ գրողի խոովված հոգին սովորաբար անդորր է որոնում բնության մեջ. «Մենակ թափառեմ. լեռների գլուխը պառկեմ ու խորհեմ. ծովերի ափին պառկեմ և խորհեմ—տիեզերք խորհեմ. հավերժություն խորհեմ...» (2, 311)։ Հավերժության խորհուրդը նա սովորում էր բնությունից, որը նույնպես անդորրի ու հանգստի կարիք ունի։ Եվ առօրյա հոգսերից մտազբաղ բանաստեղծի հայացքը ուղղվում է դեպի բնություն։ Այստեղ էլ նա ինքն իր համար փորձում է մեկնել լռության նախ՝ էությունը. «Լեզուն անզոր է հայտնել այն, ինչ որ մարդու հոգին կդդա. անհնար բան է, չկան բառեր։ Ավելի լավ է միշտ լռել, լռել, լռել. լռությունը՝ ասես խորություն, հոգու լեզու...»[6], ապա՝ այդ խորախորհուրդ լռության պատճառը. «բնությունը գաղտնալից է, խորհրդավոր ու դրա համար էլ լուռ...» (2, 202)։ Աստվածային այդ հրաշքի լուռ կախարդանքին ունկնդիր՝ գրողի լսելիքը տարբերակում է նաև այդ լռության տեսակները. «Գիշերային լռությունը գրեթե անխառն, մաքուր մի լռություն է, իսկ ցերեկվա նույնիսկ ամենախոր լռությունը լցված է ձայների փոշիներով ...ասես մի զողանջուն, անվերջ... հնչուն մի լռություն»[7]։ Անշշուկ այդ պահերին նա իր ներաշխարհի հետ է, իր մտորումների, խոհերի, զգացած-վերապրածի, հեռու հասարակության պարտադրած պահվածքից «նրանց շնչին խոսքերից, նրանց քայլերի ու զործերի աղմուկից...»։ «Կուզեմ մի լուռ ու մինակ տեղ, որ մտածեմ ու ինձ հաշիվ տամ, թե ինչ եմ, ինչ կանեմ, ինչ է կյանքը, վիշտը, սերը... (2, 392, 212)։ Խորախորհուրդ բնության այս հենքի վրա, «ի՞նչ է կյանքը—տիեզերական լռության մեջ մի երդ»[8] տրամաբանությամբ էլ օրագրում Իսահակյանը ստեղծում է սեփական բանաստեղծական նկարագիրը. «Ես մի ձայն եմ տիեզերքի մեջ, և միշտ հնչում եմ, միշտ երդում...» (2, 206)։ Մարդկային ճանաչողության սահմաններից անդին թևածող մաքի սլացքով, հոգու նրբին ելևէջների ներդաշնակ միասնությամբ էլ

5 ԳԱԹ, Իսահակյանի արխիվ, 343—346—II, էջ 32։

6 Նույն տեղում, 17—II։

7 Նույն տեղում, 405—407—II։

8 Նույն տեղում, 774—II։

գրողը հասու է դառնում բնության լեզվին, որ շնորհված էր միայն երկրային ընտրյալներին, այդ թվում և բանաստեղծ ծնված աստվածաշնորհ անհատներին. «Ո՜վ մարդիկ, ես եմ հասկանում լռությունը, որ տիեզերքի լեզուն է» (Հ, 202)։ Լռության մեջ մարդու հոգին հաղորդակցվում է նաև հինհին դարերի ու ժամանակների անեղծ բնությանը, զգում նրա անապական շունչը։ «Անհուն մի լռություն... որ բնավ չեն խոցում այս հին, նախակերտ լռությունը... Կապույտ երկինքը անծայրանում է գլխիս վերև, և արևը, տիեզերքի մեջ ամեն բանից հզորն ու գեղեցիկը, սավառնում է թևատարած...» (Հ, 391)։ Նախակերտ, անխաթար բնությունը ազգային գրականության մեջ վրձնել է Ակսել Բակունցը «Մթնաձորում»։ Այդօրինակ բնությունը «Հիշատակարանում» երբեմն ներկայանում է «վայրի» բառի կրկնությամբ. «Օս սիրում եմ բույրը վայրի վարդերի, Մոայլը վայրի անապատների, Եվ բարքն ու վարքը վայրի մարդերի» (Հ, 226—227), և այստեղ արդեն «վայրի մարդ» բառակապակցությունը պետք է հասկանալ իսահակյանական ենթատեքստով։ Իսկ վայրի բնությունն արդեն հուզում է Իսահակյանի հոգին. «Լացս գալիս է... Ինչո՞ւ՝ չգիտեմ» (Հ, 103)։ Քնարական այս զեղումները զուգադրելով գրողի թղթերում պահպանված «Բնություն» վերնագրով դեպի ծրագրային նշումներին, հասկանալի է դառնում նաև գրողի աշխարհայեցողությունը, որն է՝ բնության փիլիսոփայությունը և մարդ-բնություն բազմաշերտ, բազմադեմ հարաբերությունները. «Իմ գրելիք վեպը, որ կոչվում է «Բնություն», ուր պիտի նկարագրեմ բնությունը իր արտաքին և ներքին կողմերից... և մարդը բնության առաջ. բնության մեջ և մարդու պահանջները, երազները, նպատակները, ուզածները, տենչերը...»։ Տիեզերական ամբողջության մեջ մարդ էակին սոսկ մի հյուլե համարելով՝ նա ահով ու սարսափով է արձանագրում գոյատևման համար մղած նրա պայքարն ու անվերջ տառապանքը՝ օրորոցից մինչև գերեզման։ Դարեր ի վեր ապրելու իրավունքը մարդը ձեռք է բերում անողոք ու դաժան պայքարում. «Բայց իմ տառապանքը, իմ վիշտը, իմ ցավագին գալարումները, իմ սարսափը մահից... ավելի մեծ են, անեզր են, ծանր են, քան աստղերը բոլոր, քան տիեզերքը» (Հ, 433)։ Եվ քանի որ նրա վերջը ունայնությունն է, ապա ինչո՞ւ են կյանքն այդ անլուր, անվերջ հոշոտող ցավն ու տառապանքը, որ ինքնին ավելի մեծ է, քան ինքը՝ տիեզերքը. չէ՞ որ «Ամեն մի մարդու մահով կործանվում է մի ողջ տիեզերք»[9]։ Ըստ էության հեղինակը ողբերգություն է ապրում այն գիտակցությունից, որ ժամանակային այն կտրվածքը, որն իր ապրած կյանքն է իր մեջ առնում, ծրարում էր իր ջերմ ու կրքոտ սերը այն մարդկանց հանդեպ, որոնց սիրել է, որոնց համար տառապել և չի ուզում հրաժեշտ տալ դրան։ Մահվան ահասարսուռ օրենքի դեմ ընդվզող նրա հոգին էլ երանություն ու հանգիստ է որոնում բնության գրկում, երեկոյի անդորրության մեջ՝ հար և նման Շանթի[10]։ «Իջե՛ք, իջե՛ք երազներ...» բանաստեղծությանը տրամադրությամբ ու լեզվաոճական ատաղձի հակվածությամբ. «Իջիր երեկոյի անդորրություն, իջիր սրտիս մեջ, խաղաղացրու իմ չարչարվող հոգին... տուր ինձ անզգայություն և անգիտակցություն և քաղցր քնի պես մահ[11]...» (Հ, 433)։ Մահը որպես երանություն ընդունող օրագրի հեղինակը այնուամենայնիվ փորձում է միաժամանակ հասկանալ բնության երկսայրի առեղծվածը՝ բարի և չար կամ էլ վավերացնում է. «Բնությունը ուժեղին ստեղծել է թույլերի գլխին դահիճ... Զզվելի բնություն, սարսափելի բնություն։ ...Անիծում եմ բնությունը, նզովում եմ նրան...»[12]։ Նման եզրահանգումներն արդեն թելադրված են մարդ

---

9 Նույն տեղում, 773։

10 Լ. Շ ա ն թ. Ընտիր երկեր. Երևան, 1969, էջ 228—229։

11 Բանաստեղծի տիկնոջ վկայությամբ հենց այդպիսի մահ էր վիճակված նաև իրեն՝ Վարպետին։ Հ. Մ ի ր ա ս. Քսանմեկ տարի Ավետիք Իսահակյանի հետ. Երևան, 1984, էջ 122։

12 ԳԱԹ, Իսահակյանի արխիվ, 344, էջ 1—2։

յակի մահվան անխուսափելիության գաղափարով։ Բնության գաղտնիքները ճանաչելու հանելուկը վճռել փորձող մարդ էակն արդեն չի կարողանում մեկնաբանել նրա ամենամեծ խորհուրդը, իսկ մահվան ստվերը նա կրում է իր հոգում գիտակցական ողջ կյանքի ընթացքում և բնության նման, իր ժամանակավոր հոգեկան ալեկոծանքի պահին դաժանություն ու սարսափ է սփռում ամենուր։ Գրողի խորհրդածություններում բնության շնչավոր և անշունչ էակները, ինչպես «Ողջույն ամենքին» բանաստեղծության մեջ, ներկայանում են անբաժան միասնությամբ, արյունակցական հարազատությամբ. «Ծունր իջիր երկյուղած, Եվ այս մամռոտ ժայռը մեծ խոնարհ սրտով համբուրիր, նա եղբայրն է քո երեց» (I, 353)։ Ժամանակավոր, վաղանցուկ է ոչ միայն մարդ արարածը, նրա ստեղծածը, այլև բնությունն ինքը։ Եվ ահա հավերժությանը ունկնդրած և նրա հետ զրուցող բանաստեղծի աչքերի առջև որպես տեսիլաժապավեն, անցնում են «...մարդիկ ու քաղաքներ, գետեր ու լճեր, երկրներ ու աստղեր, և բոլորը փոշի դարձան ու լուռ ցրվեցին...» (Հ, 207)։ Գրողի ըմբոստ հոգին հաճախ ծառս է լինում ունայնության դեմ, սակայն միաժամանակ գիտակցում, որ իր հոշոտող ցավը ի վիճակի չէ բնության մեջ ոչինչ փոխելու։

Հիշատակարանում իր ժողովրդի քաղաքական ճակատագրի մասին գրողի խորհրդածությունները 1926 թ., այսինքն՝ երկար տարիների ընդմիջումից հետո առաջին անգամ հայրենիք ոտք դրած գրողի մոտ, համարյա միշտ ներկայանում են եզովպոսյան լեզվով, բնագրի կրկնակի ընթերցմամբ, խոր ենթատեքստով, բազմաթիվ կախման կետերով։ Ահա 1936 թ. Փարիզից հայրենիք ընդմիշտ բնակության եկող գրողի գրառումները Վենետիկում. «Արձանը Հիսուսի և Հովսեփի փախուստը Եգիպտոս. մի ծառի տակ հանգչում են։ Քնել են. Հովսեփը արթուն է և հսկում է։ Էշն էլ է քնել...» (Հ, 402)։ Եվ այսպես գրողը շարադրում է ասելիքը, մինչդեռ հայտնի է, որ հրեշտակը Հովսեփին հայտնվելով՝ պահանջում է. «Ելիր՝ առ մանուկը ու անոր մորը և գնա...» (Մաթ, Բ., 20)։ Այստեղ օրագրի հեղինակի ասելիքը հասկանալի է դառնում հեգելյան մեկնությամբ. «Տիրամոր սերը... ըստ էության բացարձակ բավարարված, երանելի հոգեհարազատություն է նշանակում»[18]։ Այլ դեպքում բնության հրաշք գեղեցկության նկարագրությանը հաջորդող կախման կետերն են հուշում գրողի ասելիքի անավարտվածությունը. «Ես շրջել եմ Գարդա լճի շքեղ և հոյակապ ափերով, որոնց դարեր առաջ երգել են Վերգիլիոսը և Կատուլը...» (Հ, 404)։ Գայուս Վալերիուս Կատուլոսը (մ. թ. ա. 87—54) Կեսարի ժամանակակիցն էր՝ հռոմեական քաղաքական և ռազմական այն գործչի, որի պայքարը հանրապետության դեմ ավարտվեց հաղթանակով, և նա իրեն հռչակեց նախ դիկտատոր, ապա՝ «դիկտատոր պերպետուս»։ Իսահակյանը մտովի զուգահեռներ անցկացնելով իրենց ապրած քաղաքական ժամանակահատվածների միջև, անպայման մտաբերում էր Կեսարին և նրա համախոհներին խարազանող գրողի բանաստեղծությունները, ուր, ժամանակակիցների վկայությամբ, նա «...հավերժական դրոշմ էր դրել նրա և Մամուրրուսի վրա»[14]։ Կեսարի համախոհին ու կամակատարին բանաստեղծն անվանում է «սրիկա, անամոթ, ապիրատ, խորամանկ խաղացող»։ Հայրենիք վերադարձող գրողի մտատանջությունները Կեսար—Ստալին ուղեծրով էին տարուբերվում, և այս են հուշում հատվածն ամփոփող կախման կետերը, որոշ պատկերացում տալիս նրա ներքին ալեխռով հոգեվիճակի մասին։ Ահա և 1926 թ. Հայաստանի օրագրային պատառիկները, նույնպես հարուստ բազմակետերով, սակայն այստեղ արդեն գրողի ուրույն համեմատություն—զուգահեռը ամբողջացնում է ասելիքը. «Օշականն ունի 3000 բնակիչ (մոտ 600 տուն, տնտեսություն)։ Հին գերեզմանատուն, ուր ավելի շատ

---

18 Г е г е л ь. Эстетика. Т. II, М., 1969, с. 255.

14 Ա. Ա ռ ա ք ե լ յ ա ն. Հռոմեական գրականության պատմություն. Երևան, 1975, էջ 180։

մարդ կա մեռած, քան հիմա գյուղում բնակիչ...։ Գյուղացիք տխուր էին շատ...» (Հ, 373—374)։ Սրանք էլ 1936 թ. Հայաստանում օրագրին պահ տված մտորումներն են. «Մորթված հավը դեռ երկար ժամանակ, թերևս մեկ կամ երկու րոպե ջղաձգություններ է անում... Սարսափելի էր... Զարհուրանք է բնությունը. գազանություն, ոճրագործություն. ապրելը ոճիր է, բնությունը ոճրագործ է, նա մայր չէ, այլ դահիճ...» (Հ, 421)։ Ասես բնազդով մեծ տեսանողը զգում է մոտալուտ արյունահեղ արհավիրքը։

«1939 թ. սեպտեմբերի 27» նշումներում Իսահակյանը արձանագրում է իր վարորդի պատմածը. ոչխարներին հավաքել են և հերթով մորթում մյուսների ահից զարհուրած հայացքների առաջ. «Հերթի կանգնած ոչխարները նայում են սպանողին և կանգնած տեղերը դողում են, դողում են, դողում են...» (Հ, 427)։ Այս միջադեպը վերարտադրող բանաստեղծության մեջ արդեն, արձակի համեմատությամբ աննշան բառային փոփոխությունը՝ «Դասապը ծխամորճը շրթունքին...» (Հ, 349) որոշակի ակնարկ էր 1930-ական թթ. ոճրագործությունների հեղինակի մասին։ «Դողում են» բառի կրկնությամբ գրողը վերարտադրում է ժամանակի խորհրդային իրականության ճշմարիտ վավերագիրը, ուր արյան, սպանդանոցային մթնոլորտը երկրորդ համաշխարհային պատերազմի նախազգացում էր միաժամանակ։ Ստալինյան արյունոտ ոճրագործությունները վերարտադրող հատվածներում ուրվագծվում է նաև բանաստեղծը ինքը՝ անել, անօգ դեմքով, խոշտանգող ցավը հոգում, գրչակից ընկերների, ժողովրդի անմեղ զոհերի դաժան ճակատագրի համար ապրած ողբերգությամբ։ Այս ահասարսուռ տրամադրությունները տարիների հետ օրագրում տեղի են տալիս, և հետագա՝ 1940-ական թթ. երկրորդ կեսի բանկարներում իշխում են իսահակյանական ներդաշնակ հոգեոր խառնվածքին բնորոշ վրձնահարվածները։ Հայաստանի բանկարները ներկայանում են ազգային բնավորությամբ, նրա ճակատագրին բնորոշ առանձնահատկություններով։

Ստեղծագործ կյանքում բնության տեղի, գերի շուրջ գրողի խորհրդածությունները համահունչ էին արվեստը բնության նմանության ու արդյունք համարող Հովհ. Իմաստասերից Աբովյան ձգվող մտայնությանը։ Նման արենակցական հարազատությամբ հանդերձ, թվում է, Իսահակյանի բնապաշտությունը հակված է նաև դեպի գերմանական պոեզիան. «...գերմանացիների հակումը դեպի բնության խոհերի պոեզիան»[15]։

Բնության վեհ ու շքեղաշուք գեղեցկությունների, նրա խորախորհուրդ, բազմադեմ ու բազմաձև գաղտնիքների հետ հաղորդակցման, դրանց բանաստեղծացման հունով էլ ծավալվում են Իսահակյանի ստեղծագործությունները՝ չափածոն ու արձակը։

---

15 Հեգել. Փիլիսոփայության ներածություն. Երևան, 1964, էջ 267։